«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"TRANSPORT PROJECT IMPLEMENTATION ORGANIZATION"
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Տիգրան Մեծի 4, 7-րդ հարկ
Հեռ. +374 (12) 20-10-07, 20-10-10 Էլ-փոստ: info@tpio.am
4 Tigran Mets Str., 7-th floor, Yerevan 0010, Republic of Armenia
Tel.: +374 (12) 20-10-07, 20-10-10 E-mail: info@tpio.am

N 351
«05» 04 2019

«Խոյանք» ՍՊԸ-ի տնօրեն Է. Հովսեփյանին
(Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան, Մաքրավան թաղ. Ն. Շնորհալու 19)

Սույնով ծանուցվում է, որ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի և «Խոյանք» ՍՊԸ-ի միջև 2018թ. հունիսի 7-ին կնքված «Պետության կարիքների համար Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-Ծրագիր 2-ի շրջանակներում վերակառուցվող Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի վրա տեղակայված հաղորդակցուղիների (էլեկտրական օդային գծեր, խմելու ջրատարեր, կապի մալուխներ և գազատարեր) տեղափոխման նախագծերի փոփոխությունների իրականացման աշխատանքների կատարման» թիվ ՏԾԻԿ-ԱՇՁԲ-2018/1ՆԱ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ «Խոյանք» ՍՊԸ-ն մինչև 2018թ. հուլիսի 7-ը պետք է կատարեր 3,000,000.00 (երեք միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր գնով աշխատանքներ, սակայն սահմանված ժամկետում աշխատանքները չեն կատարվել:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետը՝ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը 2019 թվականի ապրիլի 5-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ «Խոյանք» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 15,000.00 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի 5.2 կետով սահմանված տուգանքի և 408,000.00 (չորս հարյուր վեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի 5.3 կետով սահմանված տույժի գումար, իսկ վճարման հանձնարարագրի պատճենը ներկայացնել «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից որպես պայմանագրի կատարման ապահովում, «Խոյանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացվելու է համապատասխան բանկին՝ վճարման պահանջագրում նշված 300,000.00 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը սահմանված կարգով և ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

.Հարգանքով
Գլխավոր տնօրենի ժ/պ Ք. ՂԱԼԵՉՅԱՆ

Կատարող՝ իրավաբանական բաժին
Հեռ. (012) 20 10 10